ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

# ԱԶԱՏԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ

# 2012 _ 2016 ԹԹ ՍՈՑԻԱԼ_ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

# ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմեց՝ հանձնաժողովի ղեկավար Ս.Հովսեփյան

Հաստատվել է հանձնաժողովի ավագանու նիստում

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ է քառամյա ծրագիրը

1. Համայնքի իրավիճակի գնահատում:
2. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները:
3. Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում:
4. Համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում:
5. Համայնքի զարգացման քառամյա ծրագրի հիմնական ցուցանիշները:

Հավելված - 1 Համայնքի ղեկավարի աշխատակազմի և ենթակա կազմակերպությունների կառուցվածքը:

Հավելված - 2 Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը:

# Ի՞ՆՉ Է ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ

Համայնքի զարգացման քառամյա ծրագիրը այն հիմնական փաստաթղթերից մեկն է, որը մշակվում է համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից, քննարկվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ: Այն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացումը:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Ազատեկ գյուղը գտնվում է Վայոց ձոր մարզի տարածքում : Գյուղը հիմնադրվել է 1828թ. Պարսկաստանի Մալմաստ գավառից գաղթած հայերի կողմից:

Գյուղի անվանումը առաջացել է << Ազատ է>> իմաստն արտահայտող բառից:

Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1640մ բարձրության վրա,շրջապատված է լեռներով: Կլիման ամռանը չորային է,ջերմաստիճանը հասնում է 35-ից 40 աստիճանի,իսկ ձմռանը -25 աստիճան:

Գյուղը մարզկենտրոնից գտնվում է 28 կմ հեռավորության վրա, ինչպես նաև Վայք քաղաքը հատող հանրապետական ճանապարհից 8 կիլոմետր հեռավորության վրա: Բնական խոչընդոտներից մեծ դեր ունեն երաշտները:Քանի որ գյուղը գտնվում է ինքնահոս ոռոգման տակ, սակայն այն անբավարար է, ուստի մեծ թվով գյուղացիներ չեն կարողանում ռացիոնալ օգտագործել իրենց հողերը և իրականացնել իրենց ծրագրերը:

Ժ Ո Ղ Ո Վ Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Գյուղում ապրում են 496 մարդ, որոնցից տղամարդիկ կազմում են բնակչության 39 տոկոսը: Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է՝

1. Երեխաներ /0-6տ/ ---------- 33
2. Դպրոցական/7-17տ./ ---------- 85
3. 18-62 տարեկան ---------- 174
4. Թոշակառուներ ---------- 84
5. Հաշվանդամներ ---------- 12
6. Աշխատունակներ ---------- 281

Գյուղը ունի 169 ծուխ, որոնցից 20-ը ընդգրկված են <<Փարոս>> համակարգում:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Գյուղը կառավարվում է համայնքի ղեկավարի/գյուղապետի/ կողմից,որն ընտրվում է չորս տարին մեկ անգամ:Գյուղապետը ստեղծել է աշխատակազմ հետևյալ կառուցվածքով՝

1. տեղակալ ---------- 1 դրույք
2. աշխատակազմի քարտուղար ------- 1դրույք
3. առաջատար մասնագետ /հաշվապահ/---1դրույք

4. առաջատար մասնագետ/ֆինանսիստ/---1դրույք

5.վարորդ ----------1դրույք

6.հավաքարար ----------0. 5 դրույք

Համայնքի ենթակառույցներն են՝

Մշակույթի տուն

Գրադարան

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 14.03.1997թ. թիվ 51 որոշմամբ,հետևյալ կազմով/տես հավելված2/:

**վարչական շենք** ---------- 1

. մշակույթի տուն ---------- 1 միավոր

. գրադարան ---------- 1

. բուժկետ ---------- 1

. **նախադպրոցական հիմնարկ** -------- 1

. **բաղնիքի շենք** ---------- 1

. **ներհամայնքանիյ փողոցներ և ճանապարհներ---18 կմ**

. ներհամայնքային կամուրջ ---------- 1

. **ներհամայնքային նշանակության ջրամատակարարման համակարգ** ---- 20 կմ

. **ներհամայնքային նշանակության ոռոգման համակարգ** ---------- 92 կմ

. **գերեզմանատուն** ----------2 հա

Ներհամայնքային ճանապարհային ցանցը վերանորոգման կարիք ունի: Ներկայումս անհրաժեշտ է վերանորոգել 10կմ ճանապարհ: Խիստ վերանորոգման կարիք ունի մշակույթի տունը:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Աղբահանությունը կատարվում է անհատական ձևով:

Խմելու ջրի մատակարարումը հաճախ կատարվում է ընդհատումներով՝ ներքին ցանցի մաշվածության պատճառով:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում կա 134 առանձնատուն ընդամենը 7.5 հազար քմ տարածքով:

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

. Համայնքի վարչական տարածքը ---------- 6685.91 հա,որից

վարելահողեր ---------- 831.37 հա

արոտավայրեր ---------- 2578.43 հա

այլ հողատեսք ---------- 3041.00 հա

ջրային հողեր ---------- 14.89 հա

դաշտային ճանապարհներ ---------- 100 հա

գերեզմանոց ---------- 2 հա

տնամերձ հողեր ---------- 63 հա

դպրոց ---------- 1 հա

գյուղամիջյան փողոցներ ---------- 20 հա

սեփականաշնորհված հողեր ---------- 410 հա

խոտհարք ---------- 61.90 հա

բնակավայրերի հողեր ---------- 33.78 հա

արդյունաբերական հողեր ---------- 20.24 հա

հատուկ պահպանվող հողեր ---------- 6.62 հա

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ոռոգման ջրի անբավարար մատակարարման պատճառով համայնքը դժվարանում է կազմակերպել գյուղ մթերքների արտադրությունը :Հիմնականում զբաղվում են ցորենի, գարու,առվույտի , կարտո - ֆիլի,կաղամբի և այլ բանջարա-բոստանային կուլտուրաների արտադրությամբ:Այս արտադրության բերքատվությունը կախված է ոռոգման ջրի նորմալ մատակարարումից:

Անասնապահությամբ զբաղվողները արտադրում են միս, կաթ,բուրդ, ձու, մեղր: Երաշտ տարիներին այս բնագավառում բժվարություններ են առաջանում: Խոտի և խտացված կերի անբավարար քանակի պատճառով դժվարանում է անասունների մսուրային շրջանի կազմակերպումը:

## ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Գյուղը ունի 1 միջնակարգ դպրոց,վերջին տարիներին վերանորոգված,բարվոք վիճակում, ուր սովորում է 85 աշակերտ:Դպրոցում գործում է նախակրթարան: Դպրոցի խմելու ջրի ցանցը գտնվում է անմխիթար վիճակում և վերանորոգման կարիք ունի:

## ՄՇԱԿՈՒՅԹ,ՍՊՈՐՏ,ՀՈԳԵՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Համայնքը ունի 1 մշակույթի տուն:Գործող գրադարանը ունի 7059 անուն գիրք:Մշակույթի շենքը գտնվում է ոչ բարվոք վիճակում:Կիսաքանդ վիճակում է նաև գյուղի եկեղեցին:

## ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Գյուղում գործում է մեկ բուժ կետ,որը գտնվում է բարվոք վիճակում: Շենքը կառուցվել է 12 տարի առաջ: Բուժ կետը ունի 1 աշխատող:

## ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքն ունի 43-բուհ-ի շրջանավարտ,տարբեր մասնագիտությունների,որոնք կարողանում են կազմակերպել կրթության ու դաստիարակության,մշակույթային,շինարարական աշխատանքներ: Գյուղում կա 18-րդ դարի եկեղեցի:

## ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

. Խմելու ջրի ցանցերի և ոռոգման ջրի ցանցերի 50% անմխիթար վիճակը:

.Ծնելիության նվազում կապված տնտեսական վիճակի վատթարացման հետ:

. Մեծանում է արտագնա աշխատանքի մեկնողների թիվը:

## ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

. Մեծ աշխատուժի առկայություն:

. Այգեգործության զարգացման հնարավորություն:

## ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ

.Խմելու ջրի ներհամայնքային ցանցի և ջրաղբյուրների անհետաձգելի վերանորոգման անհրաժեշտությունը:

.Հարկերի և վարձավճարների գանձման դժվարությունները մեծ վգանգ են սպառնում համայնքի բյուջեի կատարմանը:

## ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ռազմավարություն

.Զարգացնել գյուղատնտեսությունն ու անասնապահությունը:

.Համայնքն ապահովել շուրջօրյա խմելու ջրով:

.Կանխել անասունների սուր վարակիչ հիվանդությունները:

. Կազմակերպել համայնքի բնակչության մշակույթային կյանքը և հանգիստը աշխատանքից ազատ ժամերին:

.Ապահովել բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների նորմալ և անվտանք երթևեկությունը:

ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ ,ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ ԵՎ ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

## ԾՐԱԳԻՐ 1

Համայնքի ջրամատակարարման համակարքը կառուցվել է 1968թ-ին:Ջրագծի երկարությունը կազմում է 18 կմ:

## ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Վերջին տարիների տնտեսական անկման և ֆինանսական աղության պատճառով շարքից դուրս է եկել մոտ 43 տարվա վաղեմություն ունեցող մաշված ջրագծերը:Պետք է հաշվի առնել այն հանգամանքը ,որ վերանորոգման ենթակա ջրագծերը անցնում են լեռնային տարածքով , որտեղ անձրևաջրերից ու գարնան ձնհալից առաջանում են սխալներ և մեծ վնաս հասցնում խողովակաշարերին : Սելավների պաճառով խողովակները ջարդվում են և փչանում:Համայնքի հրատապ խնդիրներից է խմելու ջրագծերի հիմնական վերանորոգումը:

## ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի հիմնական նպատակներն են՝

.Ապահովել համայնքը շուրջօրյա խմելու ջրով:

.Նվազեցնել խողովակների մաշվածությունից առաջացած ջրի կորուստները :

.Երաշտի տարիներին բանջարա-բոստանային կուլտուրաները փրկել երաշտից:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ՝

.Կնքել համաձայնագիր ՀՄՆՀ-ի հետ, որի համաձայն ծրագրով պահանջվող գումարի 90 տոկոսը կհատկացվի հիմնադրամի կողմից,իսկ 10 տոկոսը՝ համայնքի բյուջեից և համայնքի ներդրումներից:

.Ստանալ պետության աջակցությունը:

.Հայտարարել մրցույթ և որոշել աշխատանքները իրականացնող կապալառու շին կազմակերպությունը:

.Ձեռք բերել ծրագրի իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներ:

.Կազմել ԾԻԳ համայնքի անդամներից՝ կատարվող աշխատանքները վերահսկելու համար:

## ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Իրականացնելով այս ծրագիրը, համայնքը 90 տոկոսով կապահովվի շուրջօրյա մաքուր խմելու ջրով, կնվազի ջրի կորուստները :

Գյուղում ազգաբնակչության սոցիալ-տնտեսական պայմանները կբարելավվի:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Նախնական մոտավոր հաշվարկներով 18 կմ երկարությամբ ջրագծերի վերանորոգման և վերակառուցման աշխատանքների արժեքը կկազմի 150 000մլն.դրամ:

ԾՐԱԳԻՐ 2

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ , ԳՐԱԴԱՐԱՆԻ ՇԵՆՔԻ ԵՎ ՏԱՆԻՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Համայնքի մշակույթի տունը և գրադարանը ունեն 43 տարվա պատմություն , որոնք կառուցման օրվանից մինչև օրս վերանորոգման չեն ենթարկվել:Պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ համայնքի երիտասարդները աշխատանքից ազատ ժամերին չունեն հանգստանալու և զբաղվելու հնարավորություն:Չկա սպորտով զբաղվելու համար անհրաժեշտ մարզագույք:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի հիմնական նպատակներն են՝

_.Աշխուժացնել համայնքի մշակույթային կյանքը,

. տոնական օրերին կազմակերպել մասսայական միջոցառումներ և երեկույթներ,

.տրամադրել խաղասենյակներ շախմատի,հարդու և այլ խաղերի համար,

.բուժ . կետում կազմակերպել բնակչության առաջին բուժօգնություն, որը տեղակայված է մշակույթի տան մի մասում,

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ՝

. Կնքել համաձայնագիր ՀՄՆՀ-ի հետ, որի համաձայն ծրագրով պահանջվող գումարի 90 տոկոսը կհատկացվի հիմնադրամի կողմից ,իսկ 10 տոկոսը ՝ համայնքի կողմից:

.Ձեռք բերել ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցներ:

.Կազմակերպել բարերարների կամ համայնքի կողմից ներդրումների հարցը:

ԾՐԱԳՐԻՑ ՍՊՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

.Բնակչության ազատ ժամանակն ավելի հետաքրքիր ու արդյունավետ անցկացնել,

.Ապահովել պայմաններ բնակչության կրթական և հոգևոր զարգացման համար:

ԾՐԱԳԻՐ 3

ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄԸ

Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը կազմում է 20կմ-ից ավելի , որից 2000մ կենտրոնական ճանապարհն է: Մայրուղուց մինչև գյուղ մտնող ճանապարհը ասֆալտապատ է:Գյուղամիջյան ճանապարհներից ասֆալտապատ է միայն երկուսը:

Ծրագրի հիմնական նպատակներն են՝

.Ապահովել տրանսպորտի բոլոր միջոցների համար բավարար երթևեկության պայմաններ՝ տարվա բոլոր եղանակներին:

.Վերացնել փողոցների ջրահոսքերը:

## 4. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ

Համայնքում կոնկրետ ծրագիր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը : Վայոց ձորի մարզի Ազատեկ համայնքում այն ունի հետևյալ պատկերը.

| | Եկամուտի տեսակը | 2013 նախատեսված | 2014 Կանխա-տեսված | 2015 Կանխա-տեսված | 2016 Կանխա-տեսված |
|---|---|---|---|---|---|
| | Եկամուտներ ընդամենը | 9515.8 | 3030.0 | 3030.0 | 3030.0 |
| 1 | Հարկային եկամուտներ | 2420.0 | 2300.0 | 2200.0 | 2200.0 |
| 2 | Հողի հարկ | 2.100 .0 | 2.000.0 | 1.900.0 | 1.900.0 |
| 3 | Գույքահարկ | 320.0 | 300.0 | 300.0 | 300.0 |
| 4 | Եկամտահարկ | ---- | ---- | --- | --- |
| 5 | Տեղական տուրքեր | 20.0 | 20.0 | 20.0 | 20.0 |
| 6 | Պետական տուրքեր | | | | |
| 7 | Հողի վարձավճար | 600.0 | 700.0 | 800.0 | 800.0 |
| 8 | Այլ ոչ հարկային եկամուտներ | 10.0 | 10.0 | 10.0 | 10.0 |
| 9 | Պաշտոնական տրանսֆերտներ դոտացիա | 5430.0 | --- | --- | --- |
| 10 | Տարեսկզբի ազատ մնացորդ | 1.035.8 | ---- | ---- | ---- |

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

| | ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ | Չափի միավոր | 2013 | 2014 | 2015 | 2016 |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Համայնքի տարածքը | հա | 6685.9 | 6685.9 | 6685.9 | 6685.9 |
| 2 | Բնակչության թիվը | մարդ | 631 | 635 | 638 | 640 |
| 3 | Ծնունդ | մարդ | 4 | 4 | 3 | 2 |
| 4 | Մահացությունը | մարդ | -- | 2 | 1 | 1 |
| 5 | Աշխ.ռեսուրսները | մարդ | 386 | 392 | 395 | 399 |
| 6 | Գործազրկության մակարդակ | տոկոս | 2 | 2 | 3 | 3 |
| 7. | Առևտրի նհասարակական սննդի օբյեկտների թիվը | հատ | 4 | 4 | 5 | 5 |
| 8. | Պահուստային հողեր | հա | 200 | 200 | 200 | 200 |
| 9 | Պահուստային հողերի օգտագործման մակարդակը | տոկոս | 15 | 15 | 20 | 20 |
| 10 | Խմելու ջրի ներհամայնքային ցանցի երկարությունը | կմ | 18 | 18 | 18 | 18 |
| 11 | Ներհամայնքային ոռոգման ցանցի երկարությունը | կմ | 92 | 92 | 92 | 92 |
| 12 | Ոռոգման համակարգի տակ ընկած հողեր | հա | 452 | 452 | 452 | 452 |
| 13 | Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկ. | կմ | 20 | 20 | 20 | 20 |
| 14 | Չբարեկարգված փողոցների նճանապարհների երկ. | կմ | 18 | 18 | 18 | 18 |
| 15 | Մասնավոր բնակ.ֆոնդ | Հազ.քմ | 13.5 | 13.5 | 13.5 | 13.5 |
| 16 | Բնակ.կարիք ունեցող ընտ.թիվը | հատ | 25 | 28 | 28 | 30 |
| 17 | Մեկ շնչին ընկնող ջրի սպառումը | լ/օր | 20 | 20 | 25 | 25 |
| 18 | Ջրի կորուստ.ցանցու | տոկոս | 50 | 50 | 50 | 50 |
| 19 | Սովորողների թիվը հանրակրթական դպրոցներում | մարդ | 86 | 90 | 92 | 96 |
| 20 | Գյուղապետարանի և ենթակառուցվածքների աշխատ.թիվը | մարդ | 8 | 8 | 9 | 9 |

# ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

1. Գյուղատնտեսական տնտեսությունների թիվը ---- 171

անհատական տնտեսություն ---- 171

2. Գյուղ. արտադրանքի հիմնական տեսակների արտադրությունը ց.

ա. ցորեն ----1500

բ.գարի ----600

գ.կարտոֆիլ ---- 300

դ.բանջարաբոստանային կուլ. ----- 1000

ե.կաթ ----- 2000

զ.միս -----2000

է.բուրդ -----12000

ը.մեղր -----100

3.Ցանքատարածությունները

ա.հացահատիկ ---- 80հա

բ. կարտոֆիլ ----- 1

գ. բանջարաբոստանային կուլ. -----3

դ.առվույտ -----50

ե.կորենգան -----10

4. Անասնագլխաքանակը

ա.խոշոր եղջրավոր անասուններ ---- 540

այդ թվում կովեր ----235

բ. մանր եղջրավոր անասուններ ----- 560

այդ թվում մայրեր ------ 500

գ. խոզեր ----- 20

դ. թռչուններ ------1700

ե.մեղվաընտանիքներ -------300

*ՀԱՎԵԼՎԱԾ 1*

# ԱԶԱՏԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ